

ՀԱՍՏԷ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE

ԱՐՁԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

—*—

ՍԳՆՊՑՈՍ

Տարեկան 40 Եգ. ... Վեցամսայ 20

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

Տարեկան 12 Եր.

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Ապագի բաժանորդագրութիւն չի՝ ընդունուիր :

Directeur EGHICHÉ TOROSSIAN Ծանուցումներ մասնաւոր պայմաններով կ'ընդունուին : Ձեռագիրներ եւ յին տուիր :

ՊԵՐ 19 ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ ԵՂԻՇԷ ԽՈՐՈՍՅԱՆ Արտակալ եզրկայսական կառավարութեան ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԻՏ Ս. ՊԻՆՊԻՆՅԱՆ ՊԵՐ 19

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակը կ'անցնի, պատմութիւնը կը մնայ : Ենորհաց թուականին չիմ գիտոր քանիներորդն էր... Թուղթեր քրքրելու, թուականներ ճշդելու, օրերը և ամիսները յիշատակելու ձանձրոյթը կրել աւելորդ է կարծեմ : որովհետեւ եթէ այդ նեղութիւնը յանձն առնել ուզեմ իսկ, դժուարութիւններ կան : վասն զի հին օգիւղմաններէն մէկ մասը նպատակաւոր և շարահար գողութիւններու զոհ գացած են, այն ալ եգիպտոսի նման օրէնքը և իրաւունքը յարգուած երկրի մը մէջ, մաս մ'ալ թերթիս երբեմնի կարծեցեալ բարեկամ !!! Արեթ Հաճեթեանին պարտքերուն համար վար դրուած են յարեւրաւայի մը կողմէ, անուղղակի կերպով այս տողերը կրողին դէմ երրորդ՝ եթէ կուզէք շարորդ՝ ստորագոյն դաւադրութիւն մը յաջողցնելու գիտաւորութեամբ և այս՝ զանազաններէ եղած դրամական և այլ վարձատրութիւններու փոխարէն... Նոր հերոս մը ահաւասիկ՝ որ շատ մը տեսակէտներով Պարթեանի Գրանեանը կրնայ գերազանցել...

Տարեկան հարցաքննութեան մը ժամանակ, բարոյագիտութեան դասին մէջ, Հոգաբարձուներէն մին - հաւանօրէն հանդուցեալը - հարց տուած էր աղջիկներէն մէկուն՝ որ ճշդէ կամ բացատրէ « անբարոյականութեան սահմանները » : Լրագրական ուժեղ պայքարը սկսաւ : Այն ատենները՝ տակաւին եգիպտական Մամլոյ օրէնքը գոյութիւն ունեցած չըլլալուն համար, այսինքն ինչ որ օրէնքի դրուած թեմա, հայ թերթերուն թիւը շատ էր, և հետեւաբար « Պայքարն » ալ զօրաւոր պէտք էր որ ըլլար ու եղաւ : ո՛չ թէ հիմակուան պէս « Պայքար », որ սկսողը իսկ՝ հասկնալով թէ Տօն - Գիշօթի հողմաղացներուն պատահածին պէս բան մ'է եղածը, ինքնին գաղարկը հրամայէ, թուղթեր վրայ քանի մը տողերով ինքնագոհացում ձեռք բերելով : Երկու օր առաջ էր, առիթ մը ներկայացաւ ծանօթի մը հետ վեճարանելու : Բարոյականի վրայ, ու անբարոյականութեան սահմանները՝ հարցին մէջ քաշած բոլոր տաղտուկներս, բոլոր տուայտանքներս, երեւակայութեանս առջև տղանց մը ըրին, ու զայրացայ որ՝ այն ատեն շնորհիվ երկրաչափներ չ'գտնուեցան « Անբարոյականութեան սահմանները » գծորոշելու համար, ու հիմայ անգամ մ'ալ պէտք կը ըլլայ անոր անդադառնալու : Այն ատենուան պայքարը՝ ինչպէս ըսի, շատ զօրաւոր էր, և եթէ մէկ քանիներու գլուխները չ'պատուեցան, մէկ քանի թեւեր չի կտրեցան, պատճառը այն էր որ՝ հայերը՝ թուղթով իրարու զարնելը նախամեծար կը համարին... Եգիպտոսի մէջ, ուր Գրիգոր Անգուրներ կը պակսին և անկողնիները համեմատաբար թուով շատ ու շատ են : Գրեցին ու գրեցին : Թեր ու դէմ կարծիքներ փոխանակուեցան, զաւելտականներ խմբագրուեցան, նոյն իսկ Վերջալոյսի աշխատակիցներէն սրամիտ փաստաբան Մէթուր Յար. Լ. Օ. Շամլեան, իր կծող ոճովը, յանուն հանդուցեալ ներսէս Պատրիարքին, կոնդակներ խմբագրեց և երկինքէն - կ'ըսեն թէ՛ ներսէս պատրիարք երկինք սլացած է - աշխարհի վրայ տեղացուց :



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՎԵՂ. ԿԱՌՈՂԻԿՈՍ, ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

Ա. Պալեան էֆէնտի իր բոլոր փիլիսոփայական տաղանդը ու կարողութիւնները ի սպաս դրաւ « անբարոյականութեան սահմանները » գրեթե - ճշդելու պայքարին, բայց ասոնց ամէնն ալ ապարդիւն անցան : Հարցը կնճռոտ էր՝ իսկ պատասխանները անբաւական եղան, մանաւանդ որ՝ այդ թեզը պաշտպանելու ամենածանր զբաղումը Պատ. Հոգաբարձուին կողմէ յանձնուած էր դեռատի աղջկան մը... Հետեւաբար՝ անբարոյականութեան սահմանները կը կարծուին ըլլալ և են : Արեւելքէն՝ տգիտութիւնն ու անկրթութիւնը, Հարաւ - Արեւելքէն՝ կեղծաւորութիւնն ու օրինազանցութիւնը, բուն Հարաւէն՝ խաբէութիւնն ու ոճրամտութիւնը, Արեւմտեան Հարաւէն՝ ազահուութիւնն ու բխախոհութիւնը, Բուն Արեւմտքէն՝ նորելուկ կուսակցամոլութիւնն ու անոր յուսի հետեւանքները : Արեւմտեան Հիւսիսէն՝ Դիւրահաւանութիւնն ու կարգ մը նախապաշարուածներ : Բուն Հիւսիսէն՝ չահախոհութիւնն ու զեղծարարութիւններ : Հիւսիսային արեւելքէն՝ նիւթական և բարոյական սնանկութիւնը, ասոնց վրայ կարելի է աւելցնել ընտանիքի՝ և զաւակաց տէր հայերու այն անուրակելի ընթացքը, որուն բողոքածութիւն կրնանք ըսել, և որուն դէմ բնաւ արդարացում կարելի չէ գրտնել, որովհետեւ այս ախտանիշերը ցոյց տուող անհատներուն վրայ ամեն տեսակ ոճիր և աղտոտութիւններ պէտք է փնտռել... ԿՈՐԱՔԱՄՍԿ

Մեր ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ
« Արշալոյս » ի հրատարակութեան ներկայ շրջանին վեցերորդ

ամիսը թեև ակտիվ են, և տակալին մեր յարգելի բաժանորդներէն չատերը իրենց վճարումը ըրած չեն:

Մասնաւորապէս կը խնդրենք իրենցմէ որպէսզի բարեհաճին մեր դժուարին ձեռնարկին օգնել իրենց տարեկանները փութացնելով:

Ռ Ռ Ի Մ Ա Ն Ա Կ Ա Ն Թ Ղ Թ Ա Բ Ե Ր

ՀԱՄԵՐԱՇՈՒԹԻՒՆ

ԹԷ:

ՇԱՀ - ԵՐԱՇՈՒԹԻՒՆ

— 0 —

Հաղիւ մէկ քանի շաբաթ անցաւ, երբ հայ լրագրութեան ստուար մեծամասնութիւնը մը յուսապատար ու անբացատրելի գոհունակութեամբ աննախընթաց արձագանգը կը ըլլար քաղաքական բոլոր կուսակցութիւններու կողմէ եղած շանդալից յայտնութիւններուն ու ճոխ զեկոյցներուն անոնց միջեւ սնուցուած ու գոյացած համարաչափական գովելի ու գնահատելի գաղափարին եւ, եթէ կարելի է ըսել, նախողոյցն անար:

Բազմաճառով տարիներէ ի վեր շարունակ անթուելի զրկանքներու ու ահաւոր տառապանքներու մատնուած թշուառ ժողովուրդի մը երազն էր որ պիտի իրականանար, անոր փայտաշած ու փարած գաղափարը, իտէսը վերջապէս որ թէեւ ուշ, եւ սակայն անազանքը պիտի ըլլար նորահաս զարթունակներու, սթափուններու եւ պատմական յիշատակելի արձանագրութիւններուն:

Քաղաքական կուսակցութիւններու միահողոյն գործակցութեան խօստուածը՝ մանաւանդ քաղաքական բարդ ու փափուկ պարագաներու հանդէպ կամ վաղորդանքին, իր նշանակութիւնն ու արժանիքը առաւելապէս եւ անհամեմատորէն բազմապատկելու նախանձելի բնոյթը կ'ստանար հետզհետէ ժողովուրդի ամեն խաւերուն ու խորքերուն մէջ: Երեսփոխանական ընտրութեանց ձգտողները ու ձգտումները մասամբ երաշխաւորուած կրնային թուիլ, քանի որ մէկուսական ժողովներու կամ միակամ առաջադրութիւնը՝ մէկ նպատակի շուրջ ու մէկ գետնի վրայ, ընդունած էր նաեւ Ս. Պատրիարքը յօդուս Ազգ. ամբողջական շահերուն:

Դժբախտաբար սակայն, հասարակութեան համայնունը համակրութիւնն ու խանդը հանդէպ Յեղ. կազմակերպութիւններուն տեղի տուաւ կարգ մը զբաղմունքներու արդիւնքն ու մեթոդներու մտայնութեան եւ որով համերաշխական կարգերու ցաւագինօրէն խանգարման: 1897 թ ժեկէվի Սոցիալիստական զեկոյն ասպետներն են դարձեալ որոնք առանց պահ մը անգամ վարանելու, երդմնատուցողէն կը սողոսկին ու կը մարզըցին ցեղու. նպատակով իրենց կործանարար զուգները՝ կառուցուած համերաշխական պարիսպներու կատարներուն վրայ թիզ մը տեղ խորտակուած աթոռ մը գրաւելու կամ գողնալու սը, նանկամտութեամբ: Հակադարձ տխուր տառազն այս չափով ալ չէր վերջանար դժբախտաբար, իթիհատի հատընտիր երկրպագուները անտարազիր ու անազորոյն սպառնազորով կը պահանջեն Ս. Պատրիարքէն որ Գաւառներու պահանջին, մէկուսական ընտրութիւններու մասին անշուշտ տեղի տայ, ինչու Ս. Պատր. հօր հրաժարման տեղի տուող բաց նամակի հեղինակը՝ միայն «եան» ով հայ ժաբ-Սայապալ «եան» ֆրանք ու թուրք թեթեւամտը այն հերոսներէն մէկը չէ՞ որոնք կը յանդգնին ժողովուրդի իրաւունքները կոտորելով ապահովել քանի մը ձրիակեր սինըքորներու կեանքն ու կամքը:

Երեսփոխանն ու կենդանի փաստ-

ըր անանկ ցոյց կուտան որ կան ու կը հաւատան տակալին շատ շատեր, թէ անոնց ամենքն ալ լուրջ գործներ են եւ ոչ թէ կրողներ...

ՅՂ ի պատգամաւորական պատմական ժողովի որոշումներէն յետոյ գտնուեցան շատեր, այդ միեւնոյն կողմէն ու կազմակերպութեան, որոնք քաջութիւնը ունեցան իրենց արդար զայրոյթն ու նաղկանքը յայտնելու. մինչդեռ այսօր, երբ պատեհաութ պարագաները յոյժ ծանրակշիռ հանգամանքներու տակ կը գտնուին, ոչ ոք չի կայ ձայն բարձրացնող կամ իրաւասութիւնները կորովամտօրէն ձանձկող ու ճշող: Ամենքն ալ խուլ ու համր ձեւացած կը համակերպին ոչխարամտօրէն իրենց չէֆերուն եւ անհանդուրժելի տգեղ վիզլուկներով խանգարելու ու խաթարելու պատճառ կը դառնան դարաւոր տառապանքներու կապանքներով կապուած ու կղզուած տարագիր ժողովուրդի իղձերուն կամ բաղձանքներուն իրականացման ու պատմական ներդաշնակութիւնը:

Եւ արդարեւ իրաւունք չունինք աննախանձելի իրերագրութիւններէն վերջ անգամ մը հարցնելու. — համերաշխութիւն թէ չա՞ն երայրութիւն. — բնականաբար վերջինը աւելի՞ քանի որ պարզ պաշտօն իրերը:

1914 Ապրիլ 9

ԿԱՐԱՊԵՏ Պ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

Քոնսթանցայ

ՓՈՓՈՒՆՈՒԹԻՒՆ

46 34

Տպագրական մամուլի մէջ պատահած ինչ ինչ անյարմարութիւններու պատճառաւ, ստիպուած եղանք այսօրուրէն սկսեալ Շաբաթօրերու վերածել Արշալոյս ի հրատարակութիւնը:

ՍԻՐՈՅ ԶՈՒՆԵՐ

Բ Ա Ն Տ Ի Թ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ն Ե Ր

Անձրեւտ առտու մ'էր, Բանտապահ պաշտօնեան սովորական ժամունքներէն յետոյ ձեռքը պաշտօնաթուղթ մը բռնած ու բարձրաձայն կարգաց տղատարձակուելիք քանտարկեալներուն անունները, որոնց մէջն էինք ես՝ եւ ինձի վիճակակից ընկեր մը:

Մեր ուրախութիւնը անսահման էր եւ մենք զմեզ աշխարհի ամենէն երջանիկ մարդիկը կը կարծէինք, որովհետեւ մէկ քանի ժամէն բոլորովին ազատ պիտի ըլլայինք եւ զերթ վայրենի ու աննկարարելի խոշտանգումներէ:

Ինչ վերջ բանտապահի մը եւ ժանտարմալի մը հակողութեամբ կեդրոնական Ռոսիայի տուրք կ'առաջարկէինք, մեր հոտին ձգելով սուլիման Անիէտի ընդարձակ հրապարակը, որուն վերի կողմը Դամոկլէան գուրի մը պէս կը ցցուէր կեդրոնական բանտ (մեծթերհանէ) կողմում սպանդանոցը, ուր տեղ հազարաւոր մարդիկ իրենց զրաշուները տունը եւ ընտանիքը լքած, ինկեր են, եւ որոնցմէ շատերը՝ աւաղ, իրենց չ'զործած յանցանքներուն քաւութեան համար դատապարտուած խեղճեր էին:

Կէս ժամ վերջ արդէն հասած էինք ոստիկանատուն, ուր տեղ վերջին արձանագրութիւնը կատարուելէ յետոյ ոստիկանապետին հրամանաւ ազատ արձակուեցանք. սակայն անիծեալ պահակը սխալ հասկնալով՝ մեզ առժամեայ բանտը հիւր զրկեց:

Հոն սկանառես եղանք հետեւեալ սրտակեղծք տեսարանին:

Յոյն երիտասարդ մը, հաղիւ քսան-

ԱՆԱՆԵԱՆ ԵՂՔԱՐԻՔ

ՊԵՐՁԱԿ ԱՐԶՆՅՑ ԵՐ ԿԳՆԱՆՅՑ
ՇԱՐԱ ԷՄՍՏ - ԷՏ - ՏԻՆ, ՍԱՆ ԺԱՂԷՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԻՄԱՑ

Մախուր, արագ եւ երաշխաւորելի եւն մեր պատասխան ՔՍՍԹԻՄՆԵՐԸ ամեն անոնց համար, որոնք կողմն անշախարհ հագուսներ ունենայ, Չափաւոր գ. Անրով:

Երկու տարեկան, աքսորի դատապարտուած էր պատերազմական տեսանին կողմէ. քանի մը ժամ վերջ զինքը անհաճօյ օդափոխութեան պիտի զրկէին՝ ալ ո՛վ զիտէ որ անձանթի երկիրը Փրկութեան սեւէ յոյս չի կար:

Երկաթապատ պատուհանն առջեւ երեք հոգի կեցած էին. որոնք տիրապէմ, մահուան սարսուռով լի կարծես, կսպասէին վճռական վարկեանին: Երիտասարդին ծնողքն էին:

Հայրը մտեցաւ գողգոյն քայլերով իր զաւկին մօտ, խրախուսական մէկ քանի յորդորներ թոթովիլէ յետոյ, զլիւկիոր եւ յուսահատ հեռացաւ:

Իսկ մայրը ժամերով ուսանց յարունակ միտիւններով իր որդին, իր ակամայ արցունքները պահել ջանալով վերջապէս նա ալ հեռացաւ լալագին:

Իսկ անգին, ո՛հ, անգին դեռատի հողի մը կ'սպասէր, կարծես չէր համարձակեր պատուհանին մօտենալ: Երեսը ձեռքերուն մէջ առած նա կը հեկեկար դառնապին. նա չէր ուզեր հեռանալ. անբաժանելի կապ մը կար իր եւ բանտարկեալին մէջ:

Վերջապէս մտեցաւ յամր քայլերով պատուհանին, հոն ծնկաջօք աչքերը երկինք յառած՝ անմեղունակ ձեռքերը կուրծքին, երեսակայան էակի մը պատրանքը առած, պահ մը կոչուած կընէր գերմարդկային զօրութեանց:

Օրը արդէն իրիկուն ըլլալու մօտ էր, զողորմունք ձեռները երկնցուց իր սիրելիին, բայց զժրաջաբար իտեղու անկարող վիճակի մը հասած էր: Ձինք կրծող սիրոյ կոյժը, ամեն բան աւերած էր, Գանի լսած էր իր ապագայ ամուսնին աքսորի լուրը, լուեկայն տառապած եւ անհաշիւ արցունքներ թափած էր, իր աչքերը ամեն բան կը վկայէին. արցունքի առատ հեղեղ մը վար կը հոսէր իր վարդազոյն երեսէն մարգարիտի նման, իր յուսահատի զէմը մօտալուտ վատնելի մը նախանշանները ցոյց կ'ուստային:

Իստանուծի րոպէն մօտեցած էր, Երիտասարդը ընկնց իր բարեկամուհւոյն գողգոյն թնկերը. եւ իրենց սիրոյ վերջին ուխտը երբուժով նուիրագործելէ վերջ լալանառայ համբոյր մը զը բոյժեց անոր ստոած ձեռքին վրայ, որ կարծես մահուան դրօշմը ձգեց հոն:

Ի զուր կը փորձէր մօտենալ անոր, վասնզի անիծեալ երկաթները չէին ձգեր. այսպէս երկու անորատ սրտեր իրարմ մօտ եւ իրարմէ հեռու մնացին, զժրաջող օրիորդը բարկութեան աչքերը բոց կտրած երկաթները կոտորելու փորձեր կ'ընէր, Այն ստեն պահակ ոստիկանը քիչ մը կոշտ կերպով մտեցաւ անոր եւ հըրամայեց որ դուրս ելլէ. քանի որ արգելուած էր նոյն ժամէն վերջ բանտարկեալներուն հետ սեւէ յարաբերութիւն ունենալ, իսկ նա դեռ յամուտ կորովով կառչած էր երկաթ ձողերուն:

Վերջապէս պահակը կ'ստիպէր որ անպատճառ հեռանայ, ինչը աղջկիկը ճարաստ վերջին միտա բարովը թոթովելով հեռացաւ լալանառայ:

Ընկերս չ'զիմանալով այս տեսարանին, զազտի արցունքները ինչ կը

պահէր մէկ կողմ քաշուած. այնչափ որ զգածուած էր, իսկ նա եւ մէկ քանիներ հաւաքուեցանք երիտասարդին մօտ, որ յուսահատութեան նուազելու վրայ էր: Մեր անօգուտ միտքաւորութիւնները փոխանակ անոր ցաւերը մեղմացնելու՝ աւելի կը կր'յնապատկուէին: Իր ճգնաժամային վարկեաններուն, ջղային ուժգին ցնցումներ կ'ունենար եւ մերթ ընդ մերթ ազդին անգին վաղելով, կորսուած բան մը փնտռելու ձեւեր կ'ընէր...

Յաջորդ օրը մենք ազատ արձակուելով երբ երիտասարդին ծնողաց մօտ գնալու վրայ էինք, յանկարծ մեր զէմ ելաւ սպիտակազարդ մեռելակառք մը, որուն մէջ կը հանդէր երէկուան տարաբաղ օրիորդը:

Քիչ մը անգին՝ նաւահանգիստին մօտ՝ բազմութիւն մը խոնուած էր, որու մէջ մեր աչքին դարկաւ երկաթ շղթաներով կապկպուած մեռելազէմ երիտասարդ մը: Երեսն ինքն հանգուցեալին նշանածն էր:

Ա. ԱՐԱՔՍ

ԱՅՈՒ ԳԻՇԵՐ

Մոռցած էի խաղաղ դեմքի միւս կողմ Դեռ չի մօտած անկողնայն կոյս ծաղիներուն, Սերս յանկարծ պոռթկաց արեւ իրազիկ, Ո՛ր հողիս ալ դեռ կը ծիպայ ազազուե...

Ո՛վ վարսազեղ ու հիւստեա հովուունիս, Դու այս գիշեր շարժարեցիր երազով իմ կարեւոր ու սպառն խոց հողիս, Որ քո սիրոյ հնգիւն մեզ կ'երգեր զով:

Կայծ մը յոյսերուս միտքիս մեզ քափուր Այս գիշեր իմ յոյսը եղաւ սեղանիս, Նոյն յոյսն առած կուզաւ ըլլալ անձնատուր կոյս սուր սրդի՝ կաւ քի չի առ յոյսու հողիս:

Գաւիտե Ա. Մ. Մ. ԷՓՏԱՀԱՐ

ՀԱՅ ՄԱՆՈՒԼԵՆ

Իր զօգիւման կարսագրեմք Պօշիս հրատարակուած ԱՄՆԻՔԻՆ քերթիկ իր հակառակորդներուն ճառած հետեւեալ պատասխանէր:

«Պօշոյ մէջ հրատարակ գալու չի համարձակող մեր հակառակորդները, կ'ըսէ «Բանքեր», որոնց գործին ընաւ չեկու Բանքերի հրատարակութիւնը, տեսնելով որ լիակամ բերաններով կատարուած բրօքալանտները չեն զօրեք, սկսան իրենց վայրահաշուութիւնները ընել մեզի դէմ՝ արտասահմանի իրենց օրկաններուն մէջ:

«Բայց այդ կարգի մարդիկը պէտք է գիտնան միանգամ ընդ միշտ որ՝ Բանքերի մէջ չկայ մէկը՝ որուն ձեռքերը եղբոր անմեղ արիւնով ներկուած ըլլաւ: Չկայ մէկը՝ որուն կողորդը անցած ըլլայ ազգէն կորուած լուսաններ:

Բանքերի հրատարակիչները ո՛չ մէկ տեսն անձնական շահու համար եղբայրը եղբոր դէմ չ'են զինած և ազգին մէջ երկպառակութիւն սերմանելու նախնիներ չեն գործած:

«Բանքեր ազգին վանքերը չէ թալլած, եկեղեցիները կուսակցա-

Ա Յ Խ Ա Տ Մ Ն Ո Յ

ԱՐՈՒԵՍՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն . ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ .

Օրերայի Հրատարակիչ վրայ . Բրիտանաց Պատիկ դիմաց .

Փորագրութեան արուեստի բոլոր ճիւղերը մասնագիտորէն կը կիրարկուին մեր աշխատանքին մէջ կատարելապէս ճշգրտապէս թեմաք : Առեւտրական գրասենյակներու յատուկ ալիքաւ միտերքներ, ինչպէս՝ *Sarkon*, պիւստոսթոն պղինձէ եւ քառուկէ քիւլպրսէք բորոք քիւլպր եւ այլ որոնք մեր արտադրութեան տա, կը գտնուին դիւրամատչելի գներով .
Impression en Relief

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԲԱՆԱԽՕՈՒԹԻՒՆ

Նորին Գերապատուութիւն Թորոնթոյ Եպիսկոպոս Գուրգիան, մէք համակրելի առաջնորդական Տեղապահ, (որուն վրայ մեծ յոյսեր դրած ենք և կը փափաքինք որ իրականանան այդ յոյսերը) անցեալ կիրակի օր գեղեցիկ ու կուռ բանաստեղծութիւն մը ըրած է Ամերիկայի Միչիգան մէջ, նիւթ ունենալով « Հո. Գի. Ն. » .

Բրոք. Գայանանի, Տր. Մ. Շամ. լրեանի, Վերապատուելի Խանդա մուրի դիրար խաչաձեռն բանաստեղծութիւններէն յետոյ, Մեր Եպիսկոպոսին « Հոգին » տիրած է անոնց վրայ և հիացուցած ունկնդիրները, այնպէս որ մեր Համակրելի Ա. Պալեան էֆէնտին անգամ - հիացուածով կը խօսէր նորին Գերապատուութեան « Հոգիին » վրայ և կը խօստանար յետ այսու ամէն կիրակի Պէն - էլ - Սուրենի եկեղեցին յաճախել, իր հոգեկան միտքարու թիւնները հոն փնտռելու համար

Այս ամէնը աղէկ . բերքի քիչ կայ Մեր Սրբազանին լայնախոհութիւնն ալ մեզի չի զարմացներ : Բայց սա չարածր լեզուներուն (այս բառին յաճախ գործածութիւնը մեր դժուարահաճ Սեղաք Օտապաշահնին, այլապէս Ս. Օ. կը պարտինք) ինչ ըսենք որ մեր Սրբազանին Ա. մերիգան Միչիգան մէջ բանաստեղծ քաղաքական և կենցաղագիտական կրկին տեսակէտներով կ'ԱՆՈՒԻՑ կը գտնեն և նոյն իսկ աւելի առաջ կ'երթան դիտել տալով որ « Եթէ հայ Բողոքականներուն և Լուսաւորական Հայոց արդի մերձեցումը անկեղծ է, ինչ հարկ կայ երկու եկեղեցի և Հ. Ե. Ք. Ի. Ընկերութիւններու գոյութիւն տալով, խրեւայրութիւնը բանբասանքի ենթակող աւելորդ ծախքերու տեղի տալ և այլն, կարելի չէ որ Բողոքական բառի մը տարբերութեամբ հայերէն բաժնուած Հայերը, միանգամ ընդ միշտ ՀԱՅ ԸԼԼԱՆ ամեն կիրակի Թորոնթոյ Եպիսկոպոսը իր բեմէն լրտեսելու դիրութիւնները վայելելու համար, և այս առանց աւելորդ ծախքերու ենթարկուելու : »

Բանաւոր կը գտնենք այս նկատողութիւնները և մի թէ հայ Աւետարանականները չեն ուզեր յիշել արդեօք թէ՛ Բրիտանոս ըսած է որ, « Եւ եղեցին մի հոտ և մի հովիւ . . . » Ազգերնիս մէկ, լեզուներս մէկ, ինչո՞ւ չըլլայ տեղերնիս մէկ :

Վիճակ Ա. ՀԱՆՈՒԹԻՒՆ
Պարոն Սուրեն Պարթեւեանին պատահական հերոս « Տղաք » ներքէն Տիար Հայկանի Գրանեան նամակաւ մը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ՛ ի նպատակ Սատուցի տարաբաղկաւոր տարրի մը սարքուած վիճակահանութիւնը որ տեղի պիտի ունենար անցեալ Մայիս 24 ին, մէկ ամիս յետաձգուած է և պիտի քաշուի ներկայ Յունիս ամսոյ 24 ին .

Պատուաւոր ընտանիքի մը երկու փոքրիկները դատարարակերու համար վարժուելի մը պէտքը կայ : Գոհացուցիչ ամսական : Դիմել Արշալոյս Ի Տնօրինութեան .

Պատուաւոր ընտանիքի մը երկու փոքրիկները դատարարակերու համար վարժուելի մը պէտքը կայ : Գոհացուցիչ ամսական : Դիմել Արշալոյս Ի Տնօրինութեան .

կան պայքարի և եղբայրասպան կրեւերու թատերափայլ չէ դարձուցած . Ի պահանջել հարկին ամեն նաանձուկ պարագաներուն մէջ ազգին ամէն տեսակ աջակցութիւն ընծայող Հայ վաճառականներու, դրամատեսներու կեանքին և ինչքին դէմ դաւեր չէ՛ նիւթած . »

« Բանքեր ոչ՝ մէկ ատեն ազգային առանձնաչնորհումներուն և նուիրակալութիւններուն դէմ չէ՛ դաւաճանած և չի դաւաճաներ . »

« Բանքեր յայս կառավարութեան և յայս օտարներու Պատրիարքարանի վարկը և հեղինակութիւնը նրա ստացնող արարքներու մէջ չէ՛ գտնուած : »

« Բանքեր երբէք դիակապուտ չէ եղած և ազգին զլիւսուն եկած դժբաղդութիւնները ի շահ իր քսակին և ի միաս ազգին չէ շահագործած . »

« Թէ՛ պոլսոյ և թէ՛ արտասահմանի մէջ Բանքերի դէմ շարաստեղծութիւններ ընդ ձրիակեր մակաբոյժներուն և անոնց խամաճիկներուն միանգամ ընդ միշտ կը յայտարարենք կ'ըսէ Բանքեր, որ իրենց ըրած ազոտ սինլքութիւնները նշանակութեան զուրկ են մեզի համար և մենք պիտի շարունակենք ազգը զգուշացնել դէպի խորխորատը առաջնորդող բաղդալընդիր խաչագողներու . »

ԵՊՈՒԹ . . . կ'ըսուի թէ Բանքեր հակառակ իր այս յայտարարութիւններուն, երկար կեանք մը չէ կրցած ունենալ ու դադարած է

Ա. Չ. Գ. Ս. Ա. Յ. Ի. Ն. ԵՒ ԸՆԿ .

Աղէքսանդրիոյ մէջ Արշալոյս Ը ձեռքէ վաճառելու համար Տիար Կարպետ մըսըրլեան իր յանձնառութեան հրաժարած ըլլալով, հարկ կը համարինք մեր Աղէքսանդրիոյ համակիրներուն ծանուցանել թէ՛ անոնք որ Արշալոյսին բաժանորդագրուելի կուզեն, պէտք է դիմեն ուղղակի Խմբագրութեան հասցէին .

Տ Ե Ղ Ա Վ Ա Ն

ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻՆ ՆՄՈՅՑ ՄԸ

Կիրակի օրը յետ միջօրէի ժամը 5 ին, մինչ եզրիտական զինուորական նուազախումբը գեղեցիկ կտորներ կը նուագէր էօզպէքի պարտէզին մէջ, որ ընդհանրապէս նուագասէրներու խումբն էր զմութիւն մը շրջան կ'ընէ նուագածութեան ըմբին (ֆօլկ) շուրջ, հետեւեալ բարբարոսային դէպքը տեղի ունեցած է, կը գրէ Բրոյքն .

« Երիտասարդ մը՝ շատ ճաշակաւոր հագուած, որուն գրտերու լիւթն յայտնի կերակէր թուրք ըլլալուն հետ՝ մեծահարուստի մը վաւակը եղած ըլլալը, հետաքրքիր բազմութեան մէջ խառնուած կը շրջագայէր, երբ երկու հոգիներ հոտ գաւազանով զինուած կը յարձակին անոր վրայ և գլխին մահացու հարուածներ կը տեղան : »

Եժեռուող նախկին Մեծ Վէզիրին տղան Փուատ պէյն է եղեր, որ Եգիպտոս եկած է Սայիտ Հալիմ փաշային Վաղֆին վարչութեան հետ իր ժառանգական հաշիւները կարգադրելու համար և Արարական Ե .

զանակներու սիրահար, իր փափաքներուն յագուող գտնելու համար պարտէզը շրջագայելու եկած է .

Փուատ պէյ, իր ստացած հարուածներէն յանկարծակիի եկած և նուազելու վիճակին մէջ, նուագածութեան քօշկին փայտորմերուն կը կառչի՝ իսկ միւս կողմանէ այդ վարչութեան հանդիսատեսները յարձակողներուն վրայ ինչալով լինելի կուզեն տեղոյն վրայ, սակայն ստիկանութիւնը վրայ հասնելով կը ձերբակալէ այդ վարչութեան հեղինակները և ստիկանատուն կ'առաջնորդէ .

Ոստիկանական Տեսչին առջև ստոյք կը յայտարարեն թէ՛ Մահմուտ ձէլալ և Հիւսնի կը կոչուին, և Փուատ պէյը պատժելու զգած են քանի մը ժայրկեան առաջ իրենց պատկանած կուսակցութեան պետին՝ Սատրգ պէյի հասցէին ամենածանր նախատինքներ արձակած ըլլալուն համար .

Փուատ պէյ, իր գլխուն վրայ ստացած երկու պատառուածքներուն նախնական դարմաններ ընելէ յետոյ դեղարանի մը մէջ, իր կողքին ոստիկանութեան ներկայանալով հետեւալ յայտարարութիւնները կ'ընէ .

« Երբէք չեմ ճանչնար իմ այս երկու հակառակորդներս և ասկէ առաջ տեղ մ'ալ հանդիպած չեմ իրենց . բայց կ'ենթադրեմ թէ՛ ասոնք « Միութիւն և Յառաջդիմութիւն » կուսակցութեան վարձկաններն են որ իմ հետքերուս կը հետեւին այն ատենէն ի վեր, երբ դժբաղդութիւնը ունեցայ իրենց անհաճոյ գառնալ, իմ կատարած մէկ հրատարակութեանս պատճառաւ . »

« Ստոյք է որ գրքոյկի մը մէջ ամփոփեցի իմ թիւհատականներու բոլոր էնթրիկները, որ ի գործ դրուեցան ազգականներս պատերազմական նախարար Նազիֆ փաշան ըսպաննելու ոճրոյն մէջ . ոճիր՝ որ համայն աշխարհի ծանօթ է . »

« Եւ որովհետեւ իմ այդ երկու սիրուելիս Պուլսոյ մէջ տպագրել անկարելի էր, Սէլանիկի մէջ կատարեցի անոր տպագրութիւնը՝ ուրկէ տեղական թուրք և յոյն թերթերը հատուածներ արտագրեցին, բայց ասով չէի գիտեր թէ՛ իմ մահով ճիւղս կ'ստորագրէի . »

« Գալով ինձի, Ես Սատրգ պէյի կուսակցութեան կը պատկանեմ, և անկարելի է որ անոր հասցէին նախատինքներ տեղացած ըլլամ . »

Մօհամմէտ Փուատ պէյի այս յայտարարութիւնները արձանագրուելով, իր երկու հակառակորդները արդարութեան սրամազրութեան կը յանձնուին, որ անտարակոյս արժանի և խիստ պատիժ մը պիտի տնօրինէ .

Փուատ պէյ իրմէ ստորագրուած նամակաւ մը նորանոր ծանօթութիւններ ալ տուած է Բրոյքի միջոցաւ, սակայն միջադէպին հիմքերուն վրայ նորութիւններ չի պարունակելու համար անոր մանրամասնութիւններուն մէջ չենք մտնելու .

ՎԱՐՓՈՒՀԻ ԿՈՒՉՈՒԻ

Պատուաւոր ընտանիքի մը երկու փոքրիկները դատարարակերու համար վարժուելի մը պէտքը կայ : Գոհացուցիչ ամսական : Դիմել Արշալոյս Ի Տնօրինութեան .

ՍՐԵՍՄ

Քաղաքիս Աղբատանամ ընկերութիւնը, ի նպատակ իր սնտուկին, յառաջիկայ կիրակի 7 Յունիս 1914. « Սինէմա Սալօնիքտի » մէջ շարժապատկերներու շքեղ երեկոյթ մը պիտի տայ եւ մեծ յոյս ունի թէ՛ երեկոյթին բարենպաստակ հանգամանքը՝ ներկաներու ստուար թիւ մը առ ինքն պիտի ձգէ .

ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿՆԿՈՒ ՄԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՉ

Պատիւ ունինք ծանուցանելու թէ՛ անցեալ Մայիս 30էն սկսեան բացուած է ՌԻՍՏՈՒՐԱՆ ԱՊՊԱՍԸ Բիւ Վակահ էլ Պարթա նախկին կրան պատ Ապպասի տեղը . ուր մասնագէտ խոհարարի միջոցաւ կը պատրաստուին .

Արեւելեան ճաշակով համազամ խորտիկներ, ինչպէս Թանտըր քէպպոյ, էյուպ քէպպոյ եւ այլն, որոնք Գահիրէի համար նորութիւններ են : Նոյնպէս Բաշա եւ Իյէէմպէյի Պոսական ձեւով պատրաստութիւն . ընտիր անուշեղէններ եւն, եւն, եւն : Վստան ենք որ մեզ գիտող ամենազգի փափկաճաշակներն ալ կատարելապէս գոհ պիտի մնան, ուրեմն թող հրամանն Յարգանք

Ա. Գահիրեան եւ Ե. Փայամուտեան

ՀԵՌԱԳԻՐ

ՍԱՒԱՌԱԿԻ ԶՈՉԵՐ
Լոնսրա 4 Յունիս . - Հրանուճասար Ռիս եւ Տեղակայ Գրեւիլայ աշտ Սուրիսարքովի մօտերը Այն-Ռոքլանի արկածով մը սպաննուեցան : ՀՐԱԺԱՐՈՒՄԵՐ

Կ. Պոլիս 4 Յունիս . - Սեւր եւ Պոլիսը երկու ծերակուսակներ իրենց հրատարականները մատուցին Օսլ. Կուսալարտրեան ծերակուսակաւորներէն, որովհետեւ իրենց Ատրկայացուցած սարսակաւ ծրագիրները անընդունելի կ'ընտանուեցան : ՅԱՍՏԱՆԻ

Լոնսրա 5 Յունիս . - Թորոք Կառավարութիւնը անգլիական Եւրասիականներուն վեց յաճախուտ ապստամբ, անկեանկարճ ժամանակի մեջ յանձնուելու պայմանաւ : ԹՈՒՐԻ ՊՍՏԱՄԱՒՈՐՆԵՐ

Կ Պոլիս 5 Յունիս . - Թաշեաք պէյ Խորհրդարանին Ախսր փակուելին յետոյ, անապարկեց Խորհրդարանական պատգամաւորութիւն մը որ կը Պոլիսը եւ Ռուսիան : Խորհրդարանը ընդունեց այս առաջարկը .

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Աղէքսանդրիոյ . - Տիար Կարպետ Մըսըրլեան . - Չեզմէ մատիտով գրուած երկտողը ստացուած է . կ'սպասեմ իմ որ այդ վարժուածքը ցոյց տայիք

Հանցեցէք Չեր քով մնացած թերթերը ետ դարձնել, Չեր հաշիւը կարենալ ճշդելու համար .

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ՊԱՎԱՔԻ ՓՈՂՈՑ ՆԱԽԿԻՆ ՓԱՍՏԱԼ

ՎԱՃԱՍՈՒՍԱՏԱՆ ԿԻՑ

ԵՂԱՆԱԿԻՆ ՑԱՐՍԱՐԱՍԵՆ ՏԵՍԱԿ ՆՈՐՈՒԹԻՒՆԵՆԵՐ ՀԱՍՏԵՆ
ՓՈՒՔԱՑԵՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պօլտայ ամենամանօթ թիֆլիսի Տան Գահիրէի
նորահաստաա Մանանճիւղն է .

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍԱ (Եղիպտոս)

Շարաթական կանոնաւոր երթեւեկ .

Միացեալ նահանգներու , Բա.
նատայի եւ Հարաւային Ամերիկա.
յի համար .

Գաղթականներու համար չափա.
ւոր գին :

Աչքի ըննութիւնը ճիշտաւ
կը կատարուի տեղւոյս մէջ ,

Մանրամասն տեղեկութեանց
հասնար դիմել Վոյաճիպոստեան .

ՄՅԶԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Հեռագրական Հասցէ - ԼԵՆՕՔՕ

Փոսթ արկղ թիւ 837

Թուրքիոյ գաւառներու մէջ

փոխ - գործակալներ կը փնտրուին

ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂՔՍԱՍՆԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԷՒ ՀԱՅՈՑ

241 ր թիւ .

Գահիրէ, 31 Մայիս 1914

Առաջին պարգև .

Թիւ	15427	Ղրջ	Ողջ	4000
»	2803	»	»	400
»	15741	»	»	200
»	15157	»	»	100
»	9371	»	»	»
»	13727	»	»	»
»	9356	»	»	»
»	10689	»	»	»
»	12210	»	»	»

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70ա.
կան դրուշ :

4	89	250	464	542	546	1268	1299
1757	3091	3871	4710	5290	5482		
5724	5233	6236	6702	6869	7407		
7980	8437	8494	10341	10684	11303		
11574	11851	12160	12274	12529			
12849	13294	13804	14026	14185			
14267	15194	15730	15956				


ՓՈՐԱԳՐԻՉ

Ա. ՍԻՆԷՄԵԱՆ

ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մոսկաւմէս Այի Փողոցին վրայ
ՇԱՐՄ. ԹՕՐԿՈՒՄԱՆ

THE «SINGER» MANUFACTURING Co



Շարա-էլ-Մըրապի Տալիզ Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԸՐԻՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ
մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է :


400 Ե անչի վկայական եւ մեքայնեան վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՑԻ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՎԱԳՈՒՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ .
ուշագրութիւն դարձնել
իւրաքանչիւր «եքենայի
վրայ ՍԻՆԿԸՐԻ ներկայ
յառկան շիժ



Չրի դասեր և նորոգու.
թիւններ , յաճախորդաց
տուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու.
նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

Գին ՉԱՓ . . .
ԱՇԽԱՐՀԻ ՊՈՒՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆՈՒ

ՃԱՇԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋՕՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19
ԱԻՆՏԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ.
րաստուին եւրոպական եւ Արեւել.
եան ընտիր կերակուրներ . պան.
դուխտ երիտասարդները եթէ ան.
գամ մը այցելեն մեծապէս գոհ
պիտի մնան մատչելի գիներէն և
սպասակութենէն . 14

Գ Ո Ր Ի Ս Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

« Արշալոյս » ի ամբողջ Ռուսա.
նիոյ գործակալութիւնը ստանձնած
է Տիար Կ. Փիլիպպոսեան , որուն
պէտք է զիմեւ թերթին վերաբեր.
եալ ամէն գործերու համար .
Մեր գործակալին հասցէն է .

Mr. G. B. Pilibossian
F. American
83 St. Mangalia
(Roumanie) Constantza

Նոյնպէս Արաբիկի գործակալն
է Տիար Միսաք Ա. Սուրեան , ո.
րուն պէտք է զիմեւ թերթին վե.
րաբերեալ բոլոր գործերու համար .

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՉԱԿ ՎԱՃԱՍՈՒԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ապտ էլ Ապիզ
Ապտինի Գարագոյին մօտ .
Անոնք որ ճաշակաւոր զօքսիւս մ.
ւնենալու համար զանազան տեղեր դի.
մած ու զօգոս մնացած են , թող ան.
շամ մը մեր վաճառատունը այցելեն .
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր.
ուիլ որ՝ եթէ իրենց յանձնարարութիւնը
նը գոհացուցիչ չ'գտնեն , կանխաձեռը
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագ.
ուելու փափարողներուն համար , նը.
պատրաստ ստիթ մը պիտի ըլլայ .
Ապտիկ ապագայները նկատու.
ղութեան շնորհաւոր , եւ անոնք որ
ինծի կը դիմեն , գիւրաւ կրնան ըմբռն.
նել ապտիկին տարբերութիւնները ,
թէ գործի մաքրութեան եւ թէ գի.
նելու մասին . 1-50

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազգ. քսանդրոյ և Գաւառներու
համար գործակալներու պէտքը
կայ փափարողները կրնան զիմեւ
« Արշալոյս » ի խմբագրութեան հաս.
նելին .

Արտօնատն՝ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ .

GRAND BAR ABBAS

ՇԱՐԱ ՊԱՊ ԷԼ ՊԱՀՐԻ ՆԱԽԿԻՆ ՖԼԱՇԻՆ ՏԵՂ
ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԻՔ Ս . ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ

Անցեալ Մայիս 1 ին սեղի ունեցաւ քացուր կոան Պառ Ապպասի , որ կոչուած է ըլլալ ընտանեկան հարախալայր մը , ճոխ եւ ամենամաքուր
սպասներով կահաւորուած .

ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ՝ ԽՆԱՄԵԱԼ , ԱՐԱԿ ԵՒ ԿԱՆՈՆԱԻՈՐ .

Կը հրաւիրուին Հայ ընտանիքները , յետ այսու իրենց ժամադրաւորը ընտրել կան Պառ Ապպասը վստահ ըլլալով թէ՛ գոհ պիտի մնան իրենց ընծայե.
լի նախապատուութենէն .

Կոան Պառ Ապպասը մասնաւոր խնամքով ընտրած է իր բոլոր ըմպելիները՝ և գարեջուրներուն ամեն լաւագոյն տեսակներուն հետ , առաջնութիւն
պիտի տրուի « ԼՕՎԷՆ ՊՐԱԻՆ » տեսակին՝ որ ճաշակաւորներուն քով մեծ ընդունելութիւն գտած եւ համբաւեալ է .
Օ՛ն ուրեմն . փութացէք դէպի Պար Ապպաս .

Ս . ՓԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ